DOI: 10.59560/18291155-2025.1-145

ԱՆԱՀԻՏ ՉԱԽՈՅԱՆ

ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության ծառայության կազմակերպման վարչության ավագ հրահանգիչ, Հայ-ռուսական համալսարանի իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի հայցորդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՏՈՒԿ ԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Ամփոփագիր

Սույն հոդվածի շրջանակներում կուսումնասիրենք այնպիսի իրավական կատեգորիաների ըմբռնման հիմնական մոտեցումները, ինչպիսիք են «իրավական ռեժիմները» և «հատուկ իրավական ռեժիմները», այդ ռեժիմների ժամանակ փրկարար ծառայության գործունեության առանձնահատկությունները:

Հատուկ իրավական ռեժիմները ծառայում են որպես իրավական հիմք մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների սահմանափակման համար. հետևաբար, հատուկ իրավական ռեժիմների հայեցակարգի, տեսակների և հիմնական հատկանիշների ուսումնասիրության արդիականությունը կասկածից վեր է:

Ինչպես գիտենք՝ ժամանակակից աշխարհում դինամիկ զարգացող սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային, ազգային, ժողովրդագրական, տեղեկատվական և այլ գործընթացները մեծ ազդեցություն ունեն նաև իրավական ոլորտի վրա:

Սոցիալական հարաբերությունների ձևափոխումից հետո փոփոխության են ենթարկվում նաև այդ հարաբերություններն ամրագրող իրավական ձևերն ու դրանց կառուցվածքային տարրերը, որոնցից մեկն էլ հանդիսանում է իրավական ռեժիմը, որն իրավաբանական գրականության մեջ գնալով դառնում է

առավել կիրառական՝ հանդիսանալով իրավագիտության կարևորագույն կատեգորիաներից մեկը:

Հիմնաբառեր. հատուկ իրավական ռեժիմ, ռազմական դրություն, արտակարգ դրություն, արտակարգ իրավիճակ, փրկարար ծառայություն:

1. «Իրավական ռեժիմ»-ի հասկացությունը և դասակարգումը

«Ռեժիմ» բառը ծագում է ֆրանսերեն «*régime*» բառից, որի հիմքն է լատիներեն *regimen* «կառավարում, ղեկավարություն» բառը[1]:

Վ.Բ. Իսակովի բնորոշմամբ «իրավական ռեժիմը» օբյեկտի (երևույթի կամ գործընթացի) սոցիալական ռեժիմն է, որն ամրագրված է իրավական դրույթներով և ապահովված իրավական միջոցներով:

Շարունակելով լուսաբանել այս թեզը և հիմնվելով «ռեժիմ» տերմինի (այսինքն՝ կառավարում, կարգավորում) ծագումնաբանության վրա՝ Վ. Բ. Իսակովն անդրադառնում է իրավական ռեժիմի այնպիսի էական հատկանիշի, ինչպիսին է վերջինիս նպատակահարմարությունը՝ բացատրելով, որ սոցիալական ռեժիմն իրենից ներկայացնում է սոցիալական օբյեկտի (երևույթի, գործընթացի, ենթահամակարգի) կայուն հարաբերություն՝ սոցիալական այլ օբյեկտների հետ, որն ապահովում է որոշակի նպատակների իրագործում:

Հեղինակը սահմանում է բովանդակությունը՝ որպես իրավական ռեժիմի ամենաբարդ տարր՝ հաշվի առնելով, որ վերջինս արտացոլում է կապը օբյեկտի (կրիչի) և շրջակա միջավայրի միջև, որի ներսում առկա են դրանց փոխազդեցության հիմնական առանձնահատկությունները[2]:

Ըստ Ս.Ս. Ալեքսեևի՝ իրավական ռեժիմը, ընդհանուր առմամբ, կարող է դիտարկվել որպես իրավական միջոցների համալիրը կազմող՝ կարգավորող բնույթ կրող ընթացակարգ, որը բնութագրվում է փոխազդող թույլտվությունների, արգելքների և դրական պարտավորությունների հատուկ համակցությամբ՝ ստեղծելով կարգավորման հատուկ ուղղություն:

Իրավական ռեժիմը իրավական գործիքակազմի ընդհանուր զինանոցում կարելի է դիտարկել որպես առանձին տարր, որի արդյունավետ կիրառումը մեծապես կախված է տվյալ խնդրի լուծմանը իրավիճակին համապատասխանող տարբերակի ընտրությունից, ինչպես նաև վերջինիս առանձնահատկությունից և կարգավորվող իրավահարաբերությունների բովանդակությունից[3]:

---

[1] Տե՛ս **Дворецкий И.Х.** Латинско-русский словарь. – М., 1976 г. – С. 863, URL: https://ashishkin.ru/wp-content/uploads/2019/03/Latinskii---Dvoretskii--.pdf

[2] Տե՛ս **Исаков В.Б.** Механизм правового регулирования и правовые режимы // Проблемы теории государства и права / Под ред. С.С. Алексеева. – М., 1987. – С. 291:

[3] Տե՛ս **Алексеев С.С.** Теория права. – М.: Издательство БЕК, 1995. – С. 243:

Ելնելով արդի հարաբերությունների տարատեսակ բնույթից՝ իրավական ռեժիմը, իրականում, կարող է ավելի լայն մեկնաբանվել:

Մասնավորապես, այն կարող է դիտարկվել որպես իրավական միջոցների, նպատակների, խնդիրների, ուղեցույցների և առաջնահերթությունների շարք, որոնք ուղղված են սոցիալական հարաբերությունների բարելավմանը, իրավական պետության ձևավորմանը, ժողովրդավարության, հումանիզմի և արդարադատության սկզբունքների իրականացմանը, ինչպես նաև մարդու և քաղաքացու իրավունքների ու հիմնարար ազատությունների սահմանմանը:

Մասնագիտական գրականության մեջ առկա են իրավական ռեժիմի դասակարգման մի շարք տեսակետներ:

Ս.Ս. Ալեքսեևն առաջին հետազոտողներից էր, որն առաջարկեց իրավական ռեժիմի բաժանումը առաջնային և երկրորդական (հատուկ ռեժիմների) կատեգորիաների:

Հեղինակն առաջնային իրավական ռեժիմը սահմանում է որպես իրավական միջոցների համալիր, որը սոցիալական գոյության որոշակի տիրույթում արտահայտում է իրավակարգավորման միջոցների հարաբերակցության ընդհանուր մակարդակը:

Երկրորդային իրավական ռեժիմը՝ ըստ նրա, ներառում է ընդհանուր ռեժիմի որոշակի փոփոխություններ, որոնք նախատեսում են կա՛մ հատուկ արտոնություններ՝ արտացոլված լրացուցիչ իրավունքների մեջ, կա՛մ հատուկ սահմանափակումներ, որոնք արտացոլված են լրացուցիչ արգելքներում կամ պարտավորություններում[1]:

Ըստ որոշ հեղինակների՝ իրավական ռեժիմը բնութագրվում է քանակական և որակական ցուցանիշներով՝ ընդ որում, եթե քանակական ցուցանիշը պայմանավորված է իրավական ռեժիմի կիրառման հաճախական լինելով, ապա որակական ցուցանիշը պայմանավորված է վերջինիս արդյունավետությամբ և կարգավորման ազդեցությամբ:

Իրավական ռեժիմի անհիմն, երբեմն նաև՝ հաճախակի կամ, այսպես ասած, արտոնյալ կիրառումը, կարող է հանգեցնել նյութական, անձնակազմի, ֆինանսական ռեսուրսների, աշխատաժամանակի ոչ տնտեսական վատնման և որոշ ենթահամակարգերի հիպերտրոֆիայի՝ ի վնաս մյուսների[2]:

Մեկնաբանման նման լայն սպեկտորը պայմանավորված է, հատկապես, ժամանակի մարտահրավերներով, օրինակ՝ օրեցօր աճող հրդեհների քանակով, տեխնածին և տարերային բնույթի աղետներով, համաճարակներով և այլն:

[1] Տե՛ս **Алексеев С.С.** Общие дозволения и общие запреты в советском праве. – М.: Юрид. лит., 1989. - С. 187:

[2] Տե՛ս **Исаков В.Б.** Механизм правового регулирования и правовые режимы // Проблемы теории государства и права. – М., 1987. - С. 261:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է պնդել, որ իրավական ռեժիմը իրավակարգավորման հատուկ ձև է, որն արտահայտվում է իրավական միջոցների այնպիսի համադրությամբ, որը ստեղծում է ցանկալի սոցիալական վիճակ և ապահովում անձանց շահերի բավարարման որոշակի՝ բարենպաստ կամ անբարենպաստ պայման:

Չնայած այն հանգամանքին, որ իրավական ռեժիմին բնորոշ է կայունության որոշակի աստիճան, որը, ըստ էության, երաշխավորում է դրանց նորմատիվության բարձր մակարդակը՝ պետք է նշել, որ վերոնշյալ կայունությունը ևս հարափոփոխ է և զարգանում ու մեծապես ելնում է ժամանակակից պայմաններից ու իրողություններից:

Այդ փոփոխությունները կարող են պայմանավորված լինել գործող պետական ինստիտուտների ժողովրդավարացման գործընթացների, վարչական կառավարման համակարգի բարելավման, քաղաքացիների իրավունքների պաշտպանության ամրապնդման և տվյալ երկրների օրենսդրության արդի պահանջներով ու միջազգային չափանիշներով:

2. Հատուկ իրավական ռեժիմների կիրառումը Հայաստանի Հանրապետությունում

Ժամանակակից պետությունների սահմանադրությունները, որպես կանոն, սահմանում են պետական իշխանության իրականացման երկու ռեժիմ՝ սովորական և հատուկ:

Իրավական ռեժիմի ապահովումը նախատեսված է այնպիսի իրավիճակների համար, որոնց դեպքում պետական իշխանության մարմինների բնականոն գործունեությունը դառնում է անհնար, և անհրաժեշտ է լինում վերականգնել սահմանադրական կարգը՝ ամբողջ պետության կամ պետության որոշակի տարածքում:

Հայաստանի Հանրապետությունում արտակարգ իրավիճակների և ռազմական դրության հետ կապված հասարակական հարաբերությունների կարգավորումը հատկապես կարևորվեց շնչառական համախտանիշ-2 վիրուսի (SARS-CoV-2) տարածումից և Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմից հետո:

2020 թվականի հունվարի 30-ից Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը կորոնավիրուսի բռնկումը հայտարարեց հանրային առողջության արտակարգ վիճակ, ինչը, մինչ օրս, միջազգային անհանգստություն է առաջացնում:

Մեկ ամսվա ընթացքում, հաշվի առնելով տարածման տագնապալի մակարդակը, Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը հայտարարեց համաշխարհային համաճարակի բռնկման մասին:

Քաղաքական էլիտան COVID-19-ի բռնկումը համարում էր «պատերազմ անտեսանելի թշնամու դեմ», «Երկրորդ համաշխարհային պատերազմից

հետո ամենամեծ մարտահրավերը» կամ «պետության ամենատխուր ժամերը»[1]:

Այն ի ցույց դրեց աղետների ռիսկի կառավարման ոլորտում առկա մի շարք կարևորագույն խնդիրներ, որոնց թվում էին բարդ և փոխկապակցված աղետների ռիսկերը, առողջապահական, կրթական, սոցիալ-տնտեսական համակարգերի կայունության և շարունակական գործունեության, բնակչության խոցելի խմբերի, հատուկ կարիք ունեցող անձանց առնչվող բազմաթիվ այլ հարցեր:

Վերջիններիս հաղթահարմանն ուղղված ջանքերը թելադրում են համակարգված նոր մոտեցումներ, տարբեր գերատեսչությունների, պետական և ոչ պետական հաստատությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, տեղական և միջազգային կառույցների սերտ համագործակցություն և հանրության շարունակական ուսուցում, իրազեկում, ներգրավում և գիտակցության բարձրացում:

Անվտանգությունն ապահովելու նպատակով ՀՀ Սահմանադրությունը՝ որպես այդպիսին, ամրագրում է «ռազմական դրության իրավական ռեժիմ» (Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարվելու դեպքերում) և «արտակարգ դրության իրավական ռեժիմ» (Սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում) հասկացությունները[2]:

«Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ ***ռազմական դրությունը*** բացառապես Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարվելու դեպքում իրականացվող ժամանակավոր միջոցառում է, որն իրենից ներկայացնում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեության հատուկ իրավական ռեժիմ և թույլատրում է իրավաբանական անձանց, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների ու քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքների և ազատությունների որոշակի սահմանափակումների և նրանց նկատմամբ լրացուցիչ պարտավորությունների սահմանում[3]:

---

[1] Տե՛ս **Rusi, N., & Shqarri, F.** (2020). Limitation or derogation? The dilemma of the states in response to human rights threat during the COVID-19 crisis. Academic Journal of Interdisciplinary Studies, 9(5), 166,
URL:https://www.researchgate.net/publication/345336032_Limitation_or_Derogation_The_Dilemma_of_the_States_in_Response_to_Human_Rights_Threat_during_the_COVID-19_Crisis

[2] Տե՛ս ՀՀ Սահմանադրության փոփոխություններ, ընդունվել է 06.12.2015 թ.,
URL: https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=143723

[3] Տե՛ս «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենք, ընդունվել է 05.12.2006 թ.,
URL: https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=147114

«Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ ***արտակարգ դրությունը*** ՀՀ ամբողջ տարածքում կամ դրա առանձին տարածքներում հայտարարվող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև նրանց պաշտոնատար անձանց գործունեության իրավական հատուկ ռեժիմ է:

Արտակարգ դրությունը հայտարարվում է միայն ՀՀ սահմանադրական կարգին անմիջական վտանգ սպառնալու դեպքում, ներառյալ՝ ՀՀ սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելու կամ տապալելու, իշխանությունը զավթելու փորձերը, զինված խռովությունները, զանգվածային անկարգությունները, բռնի գործողություններով ուղեկցվող ազգային, ռասայական, կրոնական հակամարտությունները, ահաբեկչական ակտերը, հատուկ նշանակության օբյեկտների գրավումը կամ շրջափակումը, անօրինական զինված միավորումների ստեղծումը և գործունեությունը, արտակարգ իրավիճակները:

Արտակարգ դրությունը հայտարարվում է միայն այն դեպքերում, երբ ՀՀ սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի վերացումն առանց դրա անհնարին է[1]:

Սահմանադրական կարգը պետական գործերի և մարդկանց կյանքի կազմակերպման այնպիսի ընթացք է, որը բխում է սահմանադրության նորմերից և համապատասխանում է դրան: Օրինականության, անվտանգության և քաղաքացիների իրավունքների պաշտպանության ոլորտում սահմանադրական կարգի ապահովումը նշանակում է մարմինների, հիմնարկների և կազմակերպությունների գործունեության, պաշտոնատար անձանց ու քաղաքացիների գործողությունների սահմանադրությանը համապատասխանեցնելը[2]:

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք փաստել, որ ՀՀ օրենսդրությամբ հստակ սահմանված են հատուկ իրավական ռեժիմների հասկացությունները և դրանց հայտարարման հիմքերը:

3. Փրկարար ծառայության գործունեության առանձնահատկությունները հատուկ իրավական ռեժիմների պայմաններում

«Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ ռազմական դրություն հայտարարվելու դեպքում ռազմական դրության ամբողջ ժամկետի ընթացքում կարող է իրականացվել փրկարար ծառայության ստորաբաժանումների համալրում, լիակատար մարտական պատրաստականության փոխադրում և «Քաղաքացիական պաշտպանության

[1] Տե՛ս «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենք, ընդունվել է 21.03.2012 թ., URL: https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=142153

[2] **Авакьян С.А.** Конституционное право: Энциклопедический словарь. – М.: Норма, 2007, URL: http://law.niv.ru/doc/dictionary/constitutional-law/fc/slovar-202-2.htm#zag-567

մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված միջոցառումների իրականացում:

«Փրկարար ծառայության մասին» օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ փրկարար ծառայությունն իրականացնում է արտակարգ իրավիճակների կանխման, հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, քաղաքացիական պաշտպանության գործառույթներ, արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության (պատերազմի) ժամանակ բնակչության և տնտեսության օբյեկտների (տարածքների) պաշտպանության, ինչպես նաև փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական, հրդեհաշիջման և այլ աշխատանքներ, 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ փրկարար ծառայությունն արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ իրականացնում է մարդկանց կյանքի փրկումն ու առողջության պահպանումը[1]:

«Պաշտպանության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ռազմական դրության կամ պատերազմի ժամանակ այլ զորքերը, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների լիազոր պետական մարմնի ուժերն անցնում են զինված ուժերի հրամանատարության օպերատիվ ենթակայության ներքո, 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պատերազմի կամ ռազմական դրության ժամանակ զինված ուժերի կազմում ընդգրկվում են նաև այլ զորքերը, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների լիազոր պետական մարմնի ուժերը, 17-րդ հոդվածի համաձայն՝ Զինված ուժերի գլխավոր շտաբը հանդիսանում է զինված ուժերի, իսկ ռազմական դրության կամ պատերազմի ժամանակ՝ նաև այլ զորքերի, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների լիազոր պետական մարմնի ուժերի օպերատիվ կառավարման մարմինը[2]:

Այսպիսով, օրենսդիրը հստակ կարգավորում է փրկարար ծառայության գործունեությունը ռազմական դրության ժամանակ թե՛ «Փրկարար ծառայության մասին», թե՛ «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենքներով և հարակից օրենսդրությամբ:

«Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ ոստիկանության, ազգային անվտանգության և պաշտպանության պետական լիազոր մարմինների ուժերն ու միջոցները գործադրվում են արտակարգ իրավիճակների կանխման, հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, մարդկանց կյանքի, առողջության երաշխավորման և նյութական արժեքների պահպանության նպատակով: Նշենք, որ

[1] Տե՛ս «Փրկարար ծառայության մասին» օրենք, ընդունվել է 08.07.2005 թ., URL: https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=190366

[2] Տե՛ս «Պաշտպանության մասին» օրենք, ընդունվել է 15.11.2017 թ., URL: https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=191089

նման լիազորությունը, համաձայն «Փրկարար ծառայության մասին» օրենքի 5-րդ հոդվածի, պատկանում է փրկարար ծառայությանը: Հատկանշական է, որ նշված լիազորությունները փրկարար ծառայությունն իրականացնում է արտակարգ իրավիճակներում, սակայն արտակարգ դրության ժամանակ «Փրկարար ծառայության մասին» օրենքով փրկարար ծառայության գործունեության իրավական կարգավորումը բացակայում է: Միաժամանակ, «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենքը արտակարգ դրության ժամանակ այդ լիազորությունների իրականացումը վերապահում է ոստիկանության, ազգային անվտանգության և պաշտպանության պետական լիազոր մարմիններին: Ելնելով վերոգրյալից՝ կարծում ենք, որ արտակարգ դրության իրավական ռեժիմի պայմաններում փրկարար ծառայության գործունեության կարգավորումը օրենսդրական հստակեցման կարիք ունի:

Հարկ է նշել, որ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության հիմքերն ու կազմակերպումը, այդ բնագավառում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների՝ անկախ կազմակերպական-իրավական տեսակից, ինչպես նաև պաշտոնատար անձանց և քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները սահմանվել են դեռևս 1998 թվականին՝ «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքով:

«Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքի 1-ին հոդվածով տրված է «**արտակարգ իրավիճակ» եզրույթի սահմանումը, այն է՝** որոշակի տարածքում կամ օբյեկտում խոշոր վթարի, վտանգավոր բնական երևույթի, տեխնածին, տարերային կամ էկոլոգիական (բնապահպանական) աղետի, համաճարակի, անասնահամաճարակի (էպիզոոտիա), բույսերի և գյուղատնտեսական մշակաբույսերի լայնորեն տարածված վարակիչ հիվանդության (էպիֆիտոտիա), զենքի տեսակների կիրառման հետևանքով ստեղծված իրավիճակ, որը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել մարդկային զոհերի, մարդկանց առողջությանն ու շրջակա միջավայրին՝ զգալի վնասի, խոշոր նյութական կորուստների և մարդկանց կենսագործունեության բնականոն պայմանների խախտման[1]:

Շատ կարևոր է տարբերակել «արտակարգ դրություն»-ը «արտակարգ իրավիճակ»-ից:

Հատկանշական է, որ հատուկ իրավական ռեժիմները պետք է ներառեն ոչ միայն արտակարգ և ռազմական բնույթի իրավիճակներ, այլ նաև այլ այնպիսի իրավական ռեժիմներ, որոնց հատուկ միջոցների կիրառման անհրաժեշտությունը իրավական սահմանափակումների ծավալով զգալիորեն

[1] Տե՛ս «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենք, ընդունվել է 02.12.1998 թ., URL: https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=197479

զիջում է պետությունում կիրառվողներին՝ արտակարգ և ռազմական դրություններին: Խոսքը վերաբերում է որոշակի սահմանափակումների և արգելքների առկայությանը այն պայմաններում, երբ արտակարգ կամ ռազմական դրություն չի հայտարարվել:

Արտակարգ և ռազմական *իրավիճակներում* (ագրեսիա, պետության սահմանադրական կարգին, մարդկանց և քաղաքացիների կյանքին ու առողջությանը սպառնացող վտանգ, բնական և մարդածին արտակարգ իրավիճակներ և այլ բացառիկ հանգամանքներ) կամ դրանից հետո, երբ անհնար է հասարակության և պետության բնականոն գործունեությունը, աճում է արտակարգ իրավիճակների բացասական հետևանքների հաղթահարմանն ու վերացմանն ուղղված վարքագծի մոդելի հստակ, հետևողական իրավական կարգավորման անհրաժեշտությունը:

Սակայն ՀՀ օրենսդրական դաշտը չի տալիս «արտակարգ իրավիճակի ռեժիմ»-ի սահմանումը, չի կարգավորում մի շարք խնդիրներ, ինչպիսիք են, թե ինչ ժամկետներում և եղանակով է հայտարարվելու արտակարգ իրավիճակը, արտակարգ իրավիճակ հայտարարելու լիազորություններ ունեցող պետական մարմինների շրջանակը, որ դեպքերում, ինչ իրադրությունում, հետևանքների ծանրության որ աստիճանում և ինչպիսի հանգամանքների առկայության պարագայում համայնքում, մարզում կամ հանրապետությունում կարող է հայտարարվել արտակարգ իրավիճակ և մտցվել արտակարգ դրության իրավիճակի ռեժիմ, ինչպես նաև արտակարգ դրություն հայտարարելու և իրավական ռեժիմ հաստատելու պատասխանատու մարմինների, կազմակերպությունների, բնակչության իրավահարաբերությունները, կիրառվող սահմանափակումներն ու միջոցները:

Արտակարգ իրավիճակների դեպքում զարգացող սոցիալական հարաբերությունները որքան լիարժեք են կարգավորվում օրենքով, այնքան կատարյալ է դրանց կիրառման մեխանիզմը, այնքան ավելի վստահ և արդյունավետ են գործում փրկարարական ծառայության ուժերն ու միջոցները դիտարկվող պայմաններում:

Այս իրավիճակում արտակարգ իրավիճակներում պետական կառավարման լիազոր մարմնի և պետական կառավարման համակարգի այլ մարմինների ուժերի և միջոցների (վտանգի կամ դիտարկվող արտակարգ հանգամանքների առաջացման դեպքում) գործունեության իրավական և կազմակերպչական հիմքերը բարելավելու համար ՀՀ օրենսդրական համակարգը պետք է լրացվի իրավական նորմերով, որոնք կսահմանեն անհապաղ կիրարկվող մեխանիզմների առաջնահերթությունների ցանկը: Բացի այդ, պետք է որոշվեն օպերատիվ վերահսկողության մարմինները, ուժերն ու միջոցները՝ ապահովելու գերակա միջոցառումների իրականացումը: Անհրաժեշտ է նաև որոշել գործադիր իշխանության մարմինը, որը պատասխանատու է ուժերի և միջոցների գերատեսչական կամ միջգերատեսչական խմբա-

վորման ձևավորման համար, որոնք ներգրավված են սոցիալական արտակարգ իրավիճակների կանխարգելման կամ ճնշելու խնդիրներում: Պետք է որոշվի նաև, թե որ իրավիճակներում և ինչ իրավական հիմքերով պետք է հայտարարվի արտակարգ իրավիճակ: Օրինակ՝ արտակարգ իրավիճակ հայտարարելու հիմքեր կարող է հանդիսանալ ՀՀ-ում աղետի առաջացման, աղետի առաջացման սպառնալիքի կամ աղետի հակազդման և հետևանքների վերացման համար առկա հնարավորությունների անբավարարությունը:

Ինչպես նաև կարող են սահմանվել գործողության հետևյալ եղանակներից մեկը.

- բարձր տագնապի ռեժիմ՝ արտակարգ իրավիճակների վտանգի դեպքում.
- արտակարգ ռեժիմ՝ արտակարգ իրավիճակների առաջացման և վերացման դեպքում[1]:

4. Եզրակացություն

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է փաստել, որ արտակարգ իրավիճակներում պետական կառավարման լիազոր մարմնի և պետական կառավարման համակարգի այլ մարմինների գործունեության իրավական և կազմակերպչական ասպեկտների հետագա կատարելագործումը պետք է առաջնահերթ ուղղված լինի անհատի, հասարակության և պետության անվտանգությանը սպառնացող մարտահրավերներին և սպառնալիքներին ժամանակին և համարժեք արձագանքման ապահովմանը:

Միևնույն ժամանակ, բոլոր այն դեպքերի պարագայում, որոնք ուղղակիորեն չեն առնչվում սահմանադրական կարգի հիմունքների պաշտպանությանը՝ խոշոր վթարներ, վտանգավոր բնական երևույթներ, տեխնածին, մարդածին, տարերային կամ էկոլոգիական աղետներ, համաճարակներ, մեր կարծիքով անհրաժեշտ է սահմանել նոր՝ «արտակարգ իրավիճակի» իրավական ռեժիմ, ինչը թույլ կտա ոչ միայն ապահովել իրավիճակին հատուկ միջոցառումների կիրառում, այլև պետությանը զերծ կպահի նմանօրինակ դեպքերի պարագայում արտակարգ դրության իրավական ռեժիմ հայտարարելուց, և, դրա արդյունքում, մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների հավելյալ և երբեմն նաև անհարկի սահմանափակումներից:

Այս համատեքստում հարկ է նշել նաև, որ օրենսդրական դաշտի վերը նշված առանձնահատկություններով պայմանավորված անհրաժեշտություն կառաջանա նաև փրկարար ծառայության ստորաբաժանումների համար ևս

[1] Տե՛ս Постановление Правительства РФ от 30 декабря 2003 г. N 794 "О единой государственной системе предупреждения и ликвидации чрезвычайных ситуаций" (с изменениями и дополнениями), URL: https://base.garant.ru/186620/

սահմանել «արտակարգ իրավիճակի» իրավական ռեժիմի պայմաններում ծառայության կազմակերպման հստակ կառուցակարգեր:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. **Алексеев С.С.** Теория права. – М.: Издательство БЕК, 1995.

2. **Алексеев С.С.** Общие дозволения и общие запреты в советском праве. – М.: Юрид. лит., 1989.

3. **Исаков В.Б.** Механизм правового регулирования и правовые режимы // Проблемы теории государства и права. – М., 1987.

4. **Дворецкий И.Х.** Латинско-русский словарь. – М., 1976г., https://ashishkin.ru/wp-content/uploads/2019/03/Latinskii---Dvoretskii--.pdf

5. **Авакьян С.А.** Конституционное право: Энциклопедический словарь. – М.: Норма, 2007, http://law.niv.ru/doc/dictionary/constitutional-law/fc/slovar-202-2.htm#zag-567

6. **Rusi, N., & Shqarri, F.** (2020). Limitation or derogation? The dilemma of the states in response to human rights threat during the COVID-19 crisis. Academic Journal of Interdisciplinary Studies, 9(5), p. 166, https://www.researchgate.net/publication/345336032_Limitation_or_Derogation_The_Dilemma_of_the_States_in_Response_to_Human_Rights_Threat_during_the_COVID-19_Crisis

7. ՀՀ Սահմանադրության փոփոխություններ, ընդունվել է 06.12.2015 թ. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=143723

8. «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենք, ընդունվել է 05.12.2006 թ., https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=147114

9. «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենք, ընդունվել է 21.03.2012 թ., https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=142153

10. «Փրկարար ծառայության մասին» օրենք, ընդունվել է 08.07.2005 թ., https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=190366

11. «Պաշտպանության մասին» օրենք, ընդունվել է 15.11.2017 թ., https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=191089

12. «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենք, ընդունվել է 02.12.1998 թ., https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=197479

13. Постановление Правительства РФ от 30 декабря 2003 г. N 794 "О единой государственной системе предупреждения и ликвидации

чрезвычайных ситуаций" (с изменениями и дополнениями) https://base.garant.ru/186620/

ОСОБЕННОСТИ ОРГАНИЗАЦИИ СПАСАТЕЛЬНОЙ СЛУЖБЫ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ В УСЛОВИЯХ ОСОБЫХ ПРАВОВЫХ РЕЖИМОВ

Аннотация

В рамках данной статьи рассмотрены основные подходы к пониманию таких правовых категорий, как "правовые режимы" и "особые правовые режимы", а также специфика деятельности спасательных служб в рамках данных режимов.

Особые правовые режимы служат правовой основой ограничения прав и свобод человека и гражданина. Поэтому актуальность изучения понятия, видов и основных признаков особых правовых режимов не вызывает сомнений.

Как известно, динамично развивающиеся социально-экономические, политические, культурные, национальные, демографические, информационные и иные процессы в современном мире оказывают большое влияние и на правовую сферу.

Вслед за трансформацией общественных отношений претерпевают изменения также правовые формы и их структурные элементы, закрепляющие эти отношения, одним из которых является правовой режим, который все больше находит применение в юридической литературе, становясь одной из важнейших категорий юриспруденции.

Ключевые слова: особый правовой режим, военное положение, чрезвычайное положение, чрезвычайная ситуация, спасательная служба.

FEATURES OF ORGANIZATION OF RESCUE SERVICE IN THE REPUBLIC OF ARMENIA IN THE CONDITIONS OF SPECIAL LEGAL REGIMES

Annotation

Within the framework of this article, we will study the main approaches to understanding legal categories such as “legal regimes” and “special legal regimes”, and the features of the activities of the rescue service in these regimes.

Special legal regimes serve as a legal basis for restricting the rights and freedoms of a person and a citizen, therefore, the relevance of studying the concept, types, and main features of special legal regimes is beyond doubt.

As we know, dynamically developing socio-economic, political, cultural, national, demographic, informational, and other processes in the modern world also have a great impact on the legal sphere.

After the transformation of social relations, the legal forms and structural elements that establish these relations also undergo changes, one of which is the legal regime, which increasingly becomes more applicable in legal literature as one of the most important categories of jurisprudence.

Keywords: special legal regime, martial law, state of emergency, emergency situation, rescue service.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 28.01.2025 թ., տրվել է գրախոսության 02.02.2025 թ., ընդունվել է տպագրության 11.02.2025 թ.: